

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Ի նիւթն անստորապատմական ձեռագրերը)

ՄԱՍՆ Ե.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ԿԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՁԵՌԱԳԻՐԸ

*Ուղղուած քոյր Մարիա Սուրբ Սրտին
(իւր քոյր Մարիային)*

ա) ՔՈՅՐ ՄԱՐԻԱՅԻՆ ՏՐՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ (1896)

Աստուածային գաղտնիքները յայտնելու դժուարությունը – Միայն Աերը կարող է մեզ հաճելի դարձնել Աստուծուն – Ոչ թէ մեծ գործեր, այլ մանկան երախտագէտ թողլթում ընդմէջ հայրական բազուկների

Յ. Մ. Յ. Թ.

Սեպտեմբեր 1896թ.

Յիսուս †

240. Քոյր իմ թանկագին, ինձնից յիշատակ խնդրեցիք հոգեւոր կրթութեանս շուրջ¹, կրթութիւն՝ որը թերեւս վերջինն է լինելու²: Եւ քանի որ մեր Մայրն³ արտօնեց այն, իմ համար մեծ ուրախութիւն է նաեւ այս կերպով ձեր հետ հաղորդակցուելը, ձեր՝ որ ինձ քոյր էք կրկին անգամ, ձեր՝ որ փոխ տուեցիք ինձ ձեր ձայնը, իմ անունից խոստանալով՝ թէ կամենում էի ծառայել միմիայն Յիսուսին, երբ ես ինքս դեռ չէի կարող խօսել: Կնքամայր իմ շատ սիրելի, այս երեկոյեան ձեր հետ խօսում է այն մանուկը, որին նուիրեցիք Տիրոջը, եւ որը սիրում է ձեզ՝ ինչպէս փոքրիկն է սիրում իր մօրը: Միայն Երկնքում կ'իմանաք չափն այն երախտագիտութեան, որ յորդում է իմ այս շնորհակալ սրտից:

Քոյր իմ թանկագին, կամեցաք ունկնդրել այն գաղտնիքները, որոնք Յիսուս յայտնում է ձեր փոքրիկ դստերը: Այդ գաղտնիքները Նա հաղորդում է նաեւ ձեզ, գիտեմ, որովհետեւ դուք էիք՝ որ սովորեցրիք ինձ ընկալել աստուածային ուսուցումները: Կ'աշխատեմ մի քանի բառ թոթովել, զգալով հանդերձ՝ թէ քանիցս անհնարին է մարդկային խօսքի համար արտաբերելն այն՝ ինչ սիրտը հազիւ է կարողանում զգալ եւ տեսնել մտքի աչքերով:

241. Մի՛ կարծէք՝ թէ միսիթարութիւնների միջով եմ նաւարկում: Ո՛չ: Իմ միսիթարութիւնը՝ երկրի վրայ միսիթարութիւններ չունենալն է: Առանց երեւալու, առանց խօսելու, Յիսուս կրթում է ինձ հոգուս խորքում: Դա չի կատարում գրքերի միջոցով, որովհետեւ չեմ հասկանում այն՝ ինչ ընթերցում եմ, բայց երբեմն մի բառն անգամ բաւական է լինում ինձ միսիթարելու համար, ինչպէս ահա այս կարճ նախադասութիւնը, որ գտայ աղօթքիս վերջում, լուծեան ու ցամաքութեան մէջ մնալուց յետոյ. «Ահա ուսուցիչը, որ տալիս եմ քեզ, կը յայտնի այն ամէնն՝ ինչ պարտաւոր ես անել: Կամենում եմ, որ այն կարգաս կեանքի գրքում, ուր պարփակուած է Սիրոյ գիտութիւնը»⁴: Սիրոյ գիտութիւնը ... ա՛հ, այո՛, այս խօսքը քաղցրութեամբ է ղօղանջում հոգուս խորքում, ա՛յս գիտութիւնն եմ միայն փնտռում: Այն ձեռքերելու համար բոլոր հարստութիւններս տալով հանդերձ, թւում է ինձ, ինչպէս Երգ Երգոցի սիրուհուն, թէ ոչինչ էլ չեմ տուել⁵: Այնքան լաւ եմ հասկանում,

¹ Այս կրթութիւնը Թերեզան կատարել էր 1896ի Սեպտ. սկզբներին եւ սրա ընթացքում բազում խորհուրդներ էր ըմբռնել իր կոչման շուրջ, այն աստիճան՝ որ քոյր Մարիան Սեպտ. 13ին նրան խնդրել էր թղթին յանձնել դրանք, ինչը Թերեզան կատարեց Սեպտ. 13ից մինչեւ 16ն ընկած օրերի ընթացքում:

² 1896ի Աւագ Ուրբաթ օրը Թերեզան ունեցել էր առաջին արիւնաթքումը:

³ Մայր Մարիամ Գոնձական, որը մեծաւորուհի էր վերընտրուել 1896ի Մարտ 21ին:

⁴ Petit breviaire du Sacré Coeur de Jésus, Nancy 1882.

⁵ Հմմտ. Երգ 8, 7

որ միայն սէրը կարող է հաճելի դարձնել մեզ Տիրոջը, որ այն է կազմում իմ միակ ներշնչարանը:

242. Յիսուս կամեցաւ յայտնել ինձ այն միակ ուղին, որ առաջնորդում է դէպի աստուածային հնոց. այն է՝ իր հօր գրկում անվախ ննջող մանկան խաղաղութիւնը: «Ով մանուկ է, թող գայ իմ մօտ», – ասում է Սուրբ Հոգին Սողոմոնի միջոցով¹, եւ սիրոյ միեւնոյն Հոգին մի այլ տեղ ասում է, որ «Ողորմութիւնը շնորհուած է փոքրերին»²: Նրա Անունից խօսելով, Եսայի Մարգարէն ասում է, որ վերջին օրը «Տէրը հովուելու է իր հօտը հովուի նման, իր բազուկների վրայ է հաւաքելու փոքրիկ գառնուկներին եւ իր սրտին է սեղմելու նրանց»³: Եւ կարծես թէ այս բոլոր խոստումները բաւական չէին, նոյն Մարգարէն, որի հայեացքը ներթափանցում էր մինչեւ յաւիտենական խորքերը, ասում է Տիրոջ անունից. «Ինչպէս մայրն է գգնում իր մանկանը, այնպէս էլ ես եմ ձեզ մխիթարելու, կրելու եմ ձեզ իմ գրկում եւ փայփայելու եմ ձեզներին վրայ»⁴: Ա՛հ, կնքամայր իմ սիրելի, այսպիսի խօսքերից յետոյ չի մնում անել ոչինչ, եթէ ոչ լռել միայն ու արտասուել, երախտագիտութիւնից ու սիրուց տարուած:

243. Ա՛հ, եթէ բոլոր թոյլ ու անկատար հոգիները զգային այն՝ ինչ զգում է նրանցից ամենափոքրը՝ հոգին ձեր Թերեզայի, չէին յուսահատուի եւ չէին հրաժարուի սիրոյ լեռան գագաթին հասնելու իրենց փափաքից: Այո՛, որովհետեւ Յիսուս չի պահանջում մեծամեծ գործեր, այլ միայն ու միայն վստահութիւն ու երախտագիտութիւն: Եւ իրօք, ահա թէ ինչ է ասում Նա սաղմոսների գրքում. «Ձեր փարախների այծերի կարիքը չունեմ, որովհետեւ իմն են անտառի բոլոր կենդանիները եւ այն հազարաւորները, որ արածում են հովիտներում. մի առ մի ճանաչում եմ սարերի թռչուններից իւրաքանչիւրին: Եթէ քաղցեմ, ձեզնից չեմ խնդրի, որովհետեւ ինձ է պատկանում աշխարհը եւ այն ամէնը՝ ինչ պարունակում է: Մի՞թէ ես հորթերի միս եմ ուտում կամ այծերի արիւն խմում: Մատուցէք Աստուծոն զոհեր գովքի ու երախտագիտութեան»⁵:

Ահա այն՝ ինչ Յիսուս պահանջում է մեզնից. կարիք չունի մեր գործերի, այլ մեր սէրն է միայն ուզում, որովհետեւ այս նոյն Ինքն Աստուած, որ յայտարարում է՝ թէ կարիք չունի մեզ ասելու, որ քաղցած է, չվարանեց մի քիչ ջուր մուրալ սամարացի կնոջից: Ծարաւ էր ... : Բայց ասելով. «Ինձ խմելու ջուր տուր»⁶, իր խեղճ արարածի սէրն է, որ խնդրում էր տիեզերքի Արարիչը: Սիրոյ ծարաւ էր ... : Ա՛հ, զգում եմ դա առաւել քան երբեք, Յիսուս ծարաւ է. աշխարհին յարողների շարքերում ապերախտների ու անտարբերների է միայն հանդիպում, եւ իր իսկ աշակերտների մէջ նոյնպէս շատ քիչ սրտեր է գտնում, որոնք նուիրում են իրեն առանց վերապահումների եւ, հետեւանքում, հասկանում իր անսահման սիրոյ գործով:

244. Քոյր թանկագին, որքան երջանիկ ենք մենք, որ ըմբռնում ենք մեր Փեսայի⁷ գաղտնիքները: Ա՛հ, եթէ դուք կամենայիք գրի առնել այն ամէնն՝ ինչ գիտէք դրանց

¹ Առկ 9, 4

² Իմ 6, 7

³ Ես 40, 11

⁴ Հմմտ. Ես 66, 13

⁵ Սղմ 49, 9-14

⁶ Յվհ 4, 7

⁷ Տե՛ս՝ Ձեռագիր Ա, 5րդ գլխի թիւ 15 ծանօթագրութիւնը:

չուրջ, ընթերցելիք չքեղ էջեր կ'ունենայինք: Բայց ես հասկանում եմ ձեզ. նախընտրում էք ձեր սրտի խորքում թաքցնել «Թագաւորի գաղտնիքները», իսկ ինձ ասում էք՝ թէ «բարի է հռչակել Բարձրեալի փառահեղ գործերը»¹: Այո՛, հիմնաւոր եմ գտնում ձեր լուռութիւնը, եւ ձեզ հաճոյք պատճառելու համար է միայն, որ գրում եմ այս տողերը, քանի որ զգում եմ իմ անկարողութիւնը՝ երկրային խօսքերով վերարտադրելու երկնային գաղտնիքները: Ինչպէս նաեւ, էջեր ու էջեր ուրուագծելուց յետոյ ինձ թւում է՝ թէ տակաւին չեմ սկսել անգամ: Այնքա՛ն զանազան են հորիզոնները, այնքա՛ն անսահմանօրէն բազմազան են նրբերանգները, որ աստուածային Նկարչի վրձինը միայն կը կարողանայ, այս կեանքի գիշերային խաւարից յետոյ, մատակարարել ինձ ներկեր, որոնք ի զօրու կը լինեն վերարտադրելու այն հրաշալիքները, որ Նա Ինքն է յայտնում իմ հոգու աչքերին:

245. Քոյր իմ թանկագին, խնդրեցիք թղթին յանձնել երազս եւ «փոքրիկ վարդապետութիւնս», ինչպէս այն անուանում էք դուք: Արեցի դա հետագայ էջերում, բայց այնքան վատ, որ կարծում եմ թէ անհնարին է, որ հասկանաք ինձ: Թերեւս չափազանցուած կը գտնէք արտայայտութիւններս: Ներէք ինձ: Դա հետեւանքն է իմ ոչ այնքան դուրեկան ոճի: Վստահեցնում եմ ձեզ, որ ոչ մի չափազանցութիւն չկայ իմ փոքրիկ հոգում, ամէն բան նրանում խաղաղ է ու հանգիստ²:

Գրելով, խօսում եմ Յիսուսին. այսպէս ինձ աւելի հեշտ է արտայայտել մտքերս: Սա, աւա՛ղ, արգելք չէ, որ դրանք արտայայտուած լինեն բաւականին վատ:

¹ Տբթ 12, 7

² Ուշադրութեան արժանի է Սրբուհու ակամայ արտայայտած միտքը, ըստ որի՝ հոգու խռովքի ու յոգնութեան գլխաւոր պատճառներից մէկը չափազանցութիւններն են:

բ) ԹԵՐԵԶԱՅԻ ՓՈԶՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՆԸ

Մի մխիթարիչ երազ – Վիթխարի ու ընդդիմադիր փափաքներ – Եկեղեցում իր անձնական կոչման բացայայտումը. այդ կոչումը Սէրն է – Այն իր մէջ բովանդակում է միւս բոլոր կոչումները եւ յաւերժական է – Կամովին նուիրումը Սիրոյն – Ծաղիկներ սփռել երգելով – Պաշտելի Արծուին վստահութեամբ սպասող տկար թոչնակի նման – Աղաչանք «փոքրիկ» հոգիների համար

Յ. Մ. Յ. Թ.

8 Սեպտ. 1896թ.¹

ԻՄ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ՄԱՐԻԱ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ

246. Յիսուս, Սիրելի իմ, արդեօք ո՞վ կարող է խօսքերով յայտնել՝ թէ ինչպիսի գործովով ու քաղցրութեամբ ես առաջնորդում փոքրիկ հոգիս: Որքա՛ն հաճելի է Քեզ ամենաստուար փոթորիկների մէջ անգամ փայլեցնել շնորհիդ ճառագայթը: Յիսուս, մրրիկն ուժգին շառաչում էր հոգուս խորքում յաղթանակիդ գեղեցիկ տօնից՝ Յարութեանդ լուսաճաճանչ տօնից ի վեր, երբ մայիսեան մի շաբաթ², խորհրդածելով այն գաղտնիմաստ երազների շուրջ, որոնք երբեմն տրուում են որոշ հոգիների, մտածում էի՝ թէ դրանք պէտք է բաւական քաղցր մխիթարութիւն պատճառէին ստացողներին: Մտածում էի, բայց նոյնը չէի խնդրում իմ համար: Երեկոյեան, փոքրիկ հոգիս, ճնշուած այն թուխպերի ներկայութիւնից, որոնք ծածկում էին իր երկինքը, դարձեալ մտածում էր՝ թէ մխիթարական երազներն իր համար չէին. եւ այդ փոթորիկի մէջ էլ ննջեց: Յաջորդ օրը Մայիսի 10ն էր, Մարիամի ամսուայ երկրորդ կիրակին, թերեւս նաեւ տարեդարձն այն օրուայ՝ որում Սուրբ Կոյսը հաճեց ժպտալ իր փոքրիկ ծաղկին³:

247. Երբ արշալոյսն հազիւ էր կարմիրով ներկում հորիզոնը, գտայ ինձ (երազի մէջ) մի տեսակ պատկերասրահում, ուր կային ուրիշ շատ անձեր եւս, բայց ինձնից հեռու: Միայն մեր Մայրն էր իմ մօտ կանգնած: Յանկարծ, առանց նրանց ներս մտնելը նկատելու, տեսայ երեք կարմեղական մայրապետներ, զգեստաւորուած մեր միաբանութեան յատուկ հանդերձներով ու մեծ քօղերով: Ենթադրեցի՝ թէ գալիս էին մեր Մօր մօտ, բայց այն՝ որ հասկացայ յստակ կերպով, նրանց Երկնքից ժամանելն էր: Սրաիս խորքում ասացի. «Որքան երջանիկ կը լինէի, եթէ տեսնէի այդ կարմեղականներից գէթ մէկի դէմքը»: Ճիշտ այդ պահին, կարծես խնդրանքս ընդունելով, սրբուհիներից ամենամեծը ուղղուեց դէպի ինձ: Իսկոյն ծունկի եկայ: Ա՛հ երջանկութիւն, կարմեղականը բարձրացրեց իր քօղը, կամ աւելի ճիշտ՝ վերցրեց այն եւ ինձ նրանով ծածկեց: Առանց որեւէ երկմտանքի ճանաչեցի երանաշնորհ Մայր Աննա Յիսուսին, Կարմեղոսի հիմնադրուհուն Ֆրանսայում⁴: Նրա դէմքը փայլում էր

¹ Սրբուհին նամակին տուել է իր ուխտադրութեան տարեդարձի թուականը (մինչ իրականում գրում էր Սեպտ. 13ից 16ը):

² Այդ շաբաթը 1896ի Մայիսի 9ն էր:

³ Եւ իրօք, Մայիսի երկրորդ կիրակին էր, որ Սուրբ Կոյսը ժպտացել էր Թերեզային 1883 թուականին, բայց այդ կիրակին Մայիսի 13ն էր, եւ ոչ թէ 10ը:

⁴ Աննա Լոբերացին 1570ին մտնելով Աւիլյայի «Սուրբ Յովսէփ» կարմեղական վանքը, վերցրեց քոյր Աննա Յիսուսի անունը: Դարձաւ խորհրդականն ու գաղափարակիցը Սրբուհի Թերեզա

աննիւթական գեղեցկութեամբ, ոչ մի ճառագայթ չէր բխում նրանից, եւ սակայն, չնայած քօղին՝ որ ծածկում էր մեզ երկուսիս, տեսնում էի այդ երկնային դէմքը լուսաւորուած մի աննկարագրելի քաղցր լոյսով, որ ծագում էր հէնց իրենից:

Ձեմ կարող պատկերել հոգուս ուրախութիւնը: Այս բաները զգացւում են, բայց անհնարին է արտայայտել դրանք: Մի քանի ամիսներ են արդէն անցել այդ հոգեթով երազից, բայց յիշատակը, որ այն թողել է հոգուս խորքում, ոչինչ չի կորցրել իր թարմութիւնից, իր երկնային հմայքից: Դեռ աչքերիս առջեւ են երանաշնորհ Մօր սիրալի հայեացքն ու ժպիտը: Կարծես դեռ զգում եմ այն քնքշանքները, որ շռայլեց ինձ:

248. Ինձ այդքան սիրուած տեսնելով, համարձակուեցի արտասանել հետեւեալ խօսքերը. «Մայր իմ, աղաչում եմ ասա՛, Տէրը դեռ երկա՞ր է թողնելու ինձ երկրի վրայ: Շուտով կը գայ ինձ տանելու»: Պատասխանեց մեղմօրէն ժպտալով. «Այո՛ շուտով, շուտով, խոստանում եմ քեզ»: «Մայր իմ, – շարունակեցի, – ասա նաեւ՝ թէ մարդասէրն Աստուած չի՞ պահանջում ինձնից աւելի՞ քան խեղճ փոքրիկ գործերս ու փափաքներս: Գո՞հ է ինձնից»: Սրբուհու դէմքն անհամեմատելիօրէն աւելի գորովալի արտայայտութիւն ընդունեց, նրա հայեացքն ու շռայլած քնքշանքները հարցիս ամենաքաղցր պատասխանը եղան: Բայց նաեւ ասաց. «Մարդասէրն Աստուած քեզնից ուրիշ ոչինչ չի պահանջում: Նա գոհ է, շատ գոհ»: Ինձ դեռ որոշ ժամանակ եւս փայփայելուց յետոյ (մի սիրով, որով ամենազգայուն մայրն անգամ չի փարւում իր որդուն), տեսայ՝ որ նա հեռանում էր: Սիրտս խնդութեան մէջ էր, բայց յանկարծ յիշեցի քոյրերիս, կամեցայ շնորհներ խնդրել նրանց համար, սակայն, աւա՛ղ, արթնացայ:

249. Յիսո՛ւս, փոթորիկն այնժամ դեռ չէր մոռնում, երկինքը խաղաղ էր ու պայծառ: Հաւատում էի¹, զգում՝ թէ կար մի Երկինք եւ որ այդ Երկինքում բնակւում էին հոգիներ, որ սիրում էին ինձ, որ նկատում էին ինձ իրենց դուստրը: Մի նմանօրինակ տպաւորութիւն կայ սրտիս մէջ նաեւ այժմ, յատկապէս եթէ հաշուի առնենք, որ երանաշնորհ Մայր Աննայի հանդէպ մինչ այդ եղել էի բացարձակապէս անտարբեր, նրա բարեխօսութիւնը երբեք չէի հայցել եւ իրեն իսկ յիշում էի միայն երբ խօսւում էր իր մասին, այսինքն՝ հագուադէպ: Այսպիսով, երբ հասկացայ՝ թէ որքան էր ինձ սիրում եւ թէ որքան քիչ անտարբեր էր իմ նկատմամբ, զգացի սրտիս ողորդելը սիրով ու երախտագիտութեամբ, ո՛չ միայն այդ սրբուհու հանդէպ, որ այցելեց ինձ, այլ հանդէպ Երկինքի բոլոր երանեալ բնակիչներին:

250. Ով Սիրելիդ իմ, այս պարգեւը միայն նախերգանքն էր այն աւելի մեծ շնորհների, որոնցով կամեցար ճոխացնել ինձ: Թող, Սէր իմ միակ, որ յիշեցնեմ Քեզ դրանք այսօր ... այսօր՝ մեր միութեան վեցերորդ տարեդարձի օրը²: Ների՛ր, Յիսուս,

Մեծի (տե՛ս՝ Ձեռագիր Ա, 2րդ գլխի թիւ 16 ծանօթագրութիւնը) եւ եղաւ ժառանգը նրա ոգու: Հետագայում, Կարմեղական Միաբանութեան վերանորոգումը տարածեց Ֆրանսայում եւ ա՛յլ երկրներում, այսինքն՝ եղաւ շարունակողը Սրբուհի Թերեզա Աւիլացու կողմից սկսուած գործի:

¹ Ուշադրութիւն. Սրբուհին պատմում է անցեալը եւ, բնականաբար, մտքերը շարադրում է անցեալ եղանակով: «Հաւատում էի» ձեւը չի նշանակում, թէ Թերեզան առաջ հաւատում էր, իսկ այժմ, գրելու պահին, ոչ. սա ակներեւ է տրամաբանութեան համար, քանի որ տուեալ խօսքերը Սրբուհին ուղղում է Յիսուսին («Յիսո՛ւս, փոթորիկն այնժամ դեռ չէր մոռնում...»), իր անցեալ, ներկայ ու ապագայ, միշտ նոյն հաւատքի Ակունքին:

² Թերեզան իր վանական ուխտերը տուել էր 1890ի Սեպտ. 8ին (բայց տես նաեւ սոյն գլխի թիւ 1 ծանօթագրութիւնը):

եթէ փափաքներս ու անսահմանութեանը հասնող յոյսերս նկարագրել փորձելով, հակատրամաբանական արտայայտութիւններ օգտագործեմ. ների՛ր եւ բժշկի՛ր հոգիս, տալով նրան այն՝ ինչ փափաքում է: Լինել հարսնացուդ, Յիսուս, լինել կարմեղական, լինել, Քո հետ միութեան արդիւնքում, մայր հոգիների՛, այս բոլորը պէտք է գոհացնէին ինձ: Մինչդեռ այդպէս չէ: Անկասկած, այս երեք շնորհները մտնում են կոչմանս մէջ. կարմեղական, հարս եւ մայր: Եւ սակայն, զգում եմ ինձնում նաեւ ա՛յլ կոչումներ. զգում եմ կոչումը մարտիկի, քահանայի, առաքեալի, վարդապետի, մարտիրոսի. վերջապէս, զգում եմ կարիքը, ծարաւը՝ կատարելու Քո համար, Յիսուս, հերոսական բոլոր գործերը: Զգում եմ հոգուս խորքում քաջութիւնը խաչակրի եւ ուզում եմ մեռնել պատերազմի դաշտում, Սուրբ Եկեղեցու պաշտպանման համար:

251. Զգում եմ ինձնում քահանայական կոչում: Ինչպիսի սիրով, Յիսուս, կը կրէի Քեզ ձեռքերիս մէջ, երբ ձայնս լսելով կ'իջնէիր Երկնքից: Ինչպիսի սիրով կը բաշխէի Քեզ հոգիներին: Բայց, քահանայ լինել երազելով հանդերձ, հիանում եմ ու բարի նախանձով խանդում Սուրբ Պրանչիսկոս Ասսիզացու խոնարհութեանը, եւ զգում եմ նրան հետեւելու կոչում, մերժելով քահանայութեան վսեմ արժանապատուութիւնը:

Յիսուս, Մէր իմ, կեանք իմ, ինչպէ՞ս հաշտեցնեմ այս հակասութիւնները: Ինչպէ՞ս իրագործեմ խեղճ փոքրիկ հոգուս փափաքները:

Հակառակ իմ ծայրագոյն փոքրկութեանը, կ'ուզէի լուսաւորել հոգիներին ինչպէս մարգարէները, վարդապետները. ունեմ առաքեալի կոչում: Կ'ուզէի կտրել անցնել ամբողջ աշխարհը, քարոզել Անունդ եւ անհաւատ երկրներում կանգնեցնել փառահեղ Խաչդ: Բայց, ա՛հ, Սիրելի, միայն մի առաքելավայր բաւական չէ ինձ, կ'ուզէի Աւետարանի բարի լուրը տարածել հինգ աշխարհամասերում միաժամանակ, եւ մինչեւ ամենահեռաւոր կղզիները: Կ'ուզէի առաքեալ լինել ոչ թէ մի քանի տարուայ համար միայն, այլ կ'ուզէի այդպիսին եղած լինել աշխարհի ստեղծումից ի վեր, եւ շարունակել լինել այդպիսին մինչեւ աշխարհի վախճանը: Բայց կ'ուզէի յատկապէս, Փրկիչ իմ սիրելի, կ'ուզէի արիւնս հեղել Քո համար, մինչեւ վերջին կաթիլը:

252. Մարտիրոսութիւն. ահա՛ պատանեկութեանս երազը, որն իմ հետ աճեց ու զարգացաւ Կարմեղոսի մենաստանում: Բայց այստեղ նոյնպէս զգում եմ, որ երազս խենթութիւն է, որովհետեւ չեմ կարողանում բաւարարուել միայն մի տեսակի մարտիրոսութեամբ: Բաւարարուելու համար, կարիքն ունեմ դրանց բոլորի: Քո նման, իմ պաշտելի Փեսայ, կ'ուզէի մտրակուել ու խաչին գամուել, կ'ուզէի մաշկագերծ մեռնել՝ ինչպէս Սուրբ Բարթողոմէոսը, կ'ուզէի՝ որ Սուրբ Յովհաննէսի նման նետէին ինձ եռացող իւղի կաթսայի մէջ, կ'ուզէի ճաշակել մարտիրոսների կրած բոլոր տանջանքները: Սրբուհիներ Ագնէսի ու Չէչիլիայի հետ կ'ուզէի գլուխս ներկայացնել դահճի երկսայր սրին, եւ ինչպէս Ժաննա դ'Արքը, սիրելի քոյրս, կ'ուզէի խարոյկի վրայ թոթովել անունդ. «Յիսո՛ւս»: Խորհելով այն չարչարանքների շուրջ, որոնց ենթարկուելու են քրիստոնէաները նախքան Արքայութեանդ գալուստը, զգում եմ՝ որ սիրտս սարսուռում է եւ պիտի ուզէի, որ ինձ նոյնպէս վերապահուէին նոյն տուժալտանքները: Յիսո՛ւս, Յիսո՛ւս, եթէ փորձէի գրի առնել բոլոր փափաքներս, ստիպուած կը լինէի վերցնել կեանքի գիրքդ. այնտեղ պատմուած են բոլոր Սրբերի գործերը, որոնք բոլորն էլ կ'ուզէի կատարել Քո համար:

¹ Այս արտայայտութեան իմաստը յստակ կերպով հասկանալու համար տե՛ս՝ Զեռագիր Ա, հատ. 135-136:

Յիսուս իմ, ի՞նչ ես պատասխանելու արդեօք այս բոլոր խենթութիւններիս: Գոյութիւն ունի՞ արդեօք մի հոգի աւելի փոքր, աւելի անկարող՝ քան ես: Եւ սակայն, ճիշտ այդ նոյն տկարութեանս համար հաճելի եղաւ Քեզ, Տէր, գոհացնել մանկական փոքրիկ փափաքներս, եւ այսօր էլ դեռ շարունակում ես գոհացնել միւս փափաքներս, որոնք աւելի մեծ են՝ քան ամբողջ տիեզերքը:

253. Աղօթքներիս ընթացքում, փափաքներիս պատճառով իրական մարտիրոսութիւն էի կրում: Մի որեւէ պատասխան գտնելու մտադրութեամբ, բացեցի Պօղոս Առաքեալի նամակները: Աչքերիս առաջ ընկան Կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 12րդ եւ 13րդ գլուխները: Առաջինում կարդացի, որ բոլորը չեն կարող միայն առաքեալներ լինել, միայն մարգարէներ, վարդապետներ, եւ այլն: Կարդացի, որ Եկեղեցին կազմուած է զանազան անդամներից, եւ որ աչքը չի կարող միաժամանակ նաեւ ձեռք լինել¹: Պատասխանը յստակ էր, սակայն չէր յագեցնում իղձերս, չէր խաղաղեցնում հոգիս: Բայց ինչպէս Մագդաղենացին շարունակ կուսակալով դատարկ գերեզմանի վրայ, գտաւ այն՝ ինչ փնտռում էր, ես նոյնպէս, խոնարհուելով մինչեւ անդնդախոր յատակն անձիս ոչնչութեան, այնքան բարձրացայ, որ կարողացայ հասնել նպատակիս²: Առանց յուսալքուելու, շարունակեցի ընթերցումս եւ մխիթարուեցի ահա այս տողով. «Եռանդով փնտռեցէք ամենակատարեալ պարգեւաշնորհները: Բայց ես առաւել եւս գերազանց ճանապարհ ցոյց կը տամ ձեզ»¹: Եւ Առաքեալը սկսում է բացատրել, որ ամենակատարեալ շնորհներն անգամ ոչինչ են առանց Սիրոյ: Սէրն է այն գերազանց ուղին, որ անսխալ կերպով առաջնորդում է դէպի Աստուած:

254. Վերջապէս գտայ հանգիստս: Դիտելով Եկեղեցու խորհրդաւոր մարմինը, ինձ չէի ճանաչել Պօղոս Առաքեալի կողմից նկարագրուած անդամներից ոչ մէկում, կամ աւելի ճիշտ՝ աշխատում էի ճանաչել ինձ բոլորում միաժամանակ: Սէրը տուեց ինձ կոչմանս բանալին: Հասկացայ, որ եթէ Եկեղեցին զանազան անդամներից կազմուած մարմին ունի, չի պակասում նրան նաեւ ամենակարեւորն ու ամենավեհը. հասկացայ, որ Եկեղեցին ունի սիրտ եւ որ այդ սիրտը բոցավառում է սիրով: Հասկացայ, որ միայն սէրն է գործի դնում Եկեղեցու անդամներին, հասկացայ, որ եթէ սէրը յանկարծ սպառուէր, առաքեալներն այլեւս չէին տարածի Աւետարանի բարի լուրը եւ մարտիրոսները նոյնպէս կը մերժէին հեղել իրենց արիւնը: Հասկացայ, որ Սէրն իր մէջ ամփոփում է բոլոր կոչումները, որ Սէրն ամէն ինչ է, որ ընդգրկում է բոլոր ժամանակներն ու վայրերը, մի խօսքով՝ որ յաւերժական է:

Այնժամ, խելացնոր բերկրանքիս հեղեղով ծածկուած, բացականչեցի. «Յիսո՛ւս, Սէր իմ, կոչումս ... այն վերջապէս գտայ. իմ կոչումը Սէրն է»:

Այո՛, գտայ իմ տեղը Եկեղեցու գրկում, եւ այս տեղն, Աստուած իմ, Դու տուեցիր ինձ: Սիրելի Մօրս՝ Եկեղեցու սրտում ես կը լինեմ Սէրը: Այսպիսով կը լինեմ ամէն բան ... եւ այսպէս իրագործուած կը տեսնեմ իղձերս:

255. Բայց ինչո՞ւ եմ խօսում խելացնոր բերկրանքի մասին: Ո՛չ, այս արտայայտութիւնը ճիշտ չէ: Աւելի՛ հանդարտ ու անխռով խաղաղութիւնն է այն նաւավարի, որ նշմարում է լուսափայլ փարոսը, որն իրեն առաջնորդում է դէպի

¹ Հմմտ. 1Կր 12, 29

² SAN GIOVANNI DELLA CROCE, *Poesie*, Altre strofe su argomenti spirituali, 3.

նաև հանգիստ: Ո՛վ սիրոյ լուսածեմ Փարոս, գիտեմ՝ ինչպէս հասնել Քեզ, գտայ բոցերիդ տիրանալու գաղտնիքը:

Մի մանուկ եմ միայն, անկարող ու տկար, եւ սակայն ճիշտ տկարութիւնս է ինձ տալիս, ո՛վ Յիսուս, սիրոյդ որպէս զոհ նուիրուելու համարձակութիւնը:

Հին Ուխտի ժամանակներում անարատ ընծաներն էին միայն հաճելի հզօր ու ամենակարող Աստուծոն: Աստուածային արդարութեանը գոհացում տալու համար հարկաւոր էին կատարեալ զոհեր: Բայց սարսափի օրէնքին յաջորդեց Սիրոյ Օրէնքը, եւ Սէրն ընտրեց ինձ որպէս զոհ ողջակէզ, ինձ՝ տկար ու թերի արարածիս: Մի՞թէ այս ընտրութիւնն արժանավայել չէ Սիրոյն: Այո՛, որովհետեւ որպէսզի Սէրը լիովին բաւարարուի, հարկ է՝ որ խոնարհուի, խոնարհուի մինչեւ ոչնչութիւն եւ կրակի գոյափոխի այդ ոչնչութիւնը:

256. Յիսուս, լաւ գիտեմ, այո՛, որ սէրը սիրով է միայն փոխհատուցում², եւ այս է պատճառը՝ որից մղուելով փնտռեցի եւ հոգեւոր սփոփանք գտայ սիրոյդ փոխարէն սէր հատուցելով միայն: «Անիրաւ հարստութիւններն օգտագործելով, ձեր համար բարեկամներ շահեցէք նրանց, որոնք ընդունելու են ձեզ յաւիտենական յարկերի տակ»³: Ահա, Տէր, այն խորհուրդը, որ տուեցիր աշակերտներիդ, հետեւեալ խօսքերը նրանց ասելուց յետոյ. «Այս աշխարհի որդիներն իրենց գործարքներում աւելի իմաստուն են՝ քան լոյսի որդիները»⁴: Լոյսի որդիս հասկացայ, որ ամէն ինչ լինելու փափաքս, բոլոր կոչումներն իմը դարձնելու կամքս, հարստութիւն էր, որ կարող էր ինձ անօրէն մէկը դարձնել: Այն օգտագործեցի՝ ինձ բարեկամներ շահելու համար: Յիշելով Եղիսէի՝ իր հայր Եղիային ուղղուած խնդրանքը, որում համարձակուեց հայցել նրա ոգին կրկնապատիկ չափով¹, կանգնեցի Հրեշտակների ու Սրբերի առաջ եւ ասացի. «Ես արարածն եմ ամենափոքր, ճանաչում եմ ե՛ւ խեղճութիւնս, ե՛ւ տկարութիւնս, բայց գիտեմ նաեւ՝ թէ ազնուազարմ ու վեհանձն սրտերի համար որքան հաճելի է բարեգործութիւնը: Այս իսկ պատճառով աղաչում եմ ձեզ, ով երանելի երկնաբնակներ, աղաչում եմ ձեզ որդեգրել ինձ որպէս դուստր: Ամբողջովին ձերն է լինելու այն փառքը, որ կ'օգնէ ինձ ձեռքբերել, բայց ... բարեհաճութեամբ գոհացրէք խնդրանքս, որ յանդուգն է, գիտեմ ... եւ սակայն համարձակում եմ խնդրել ձեզ ընդունել իմ համար ձեր սէրը կրկնապատիկ չափով»:

257. Յիսուս, չեմ կարող շարունակել աղօթքս, վախենում եմ ընկճուեմ, յանդուգն փափաքներիս ծանրութեան ներքոյ: Չքմեղանքս այն է, որ մանուկ եմ, իսկ մանուկները չեն մտածում իրենց խօսքերի տարողութեան մասին, եւ սակայն նրանց ծնողները, եթէ բազմում են գահերի վրայ, եթէ տիրում են անթիւ ու անհամար գանձերի, չեն վարանում բաւարարել փափաքներն այն փոքրիկ արարածների, որոնց սիրում են՝ որքան իրենք իրենց: Նրանց հաճոյք պատճառելու համար կատարում են խենթութիւններ, հասնում տկարութեան: Լա՛ւ ուրեմն, ես դուստրն եմ Եկեղեցու, իսկ Եկեղեցին Թագուհին է, քանի որ Քո Հարսն է, ով թագաւորների աստուածային Թագաւոր: Հարստութիւնների ու փառքի (նաեւ Երկնային Փառքի) տենչը չէ, որ ունի մանկական սիրտս: Նա հասկանում է, որ փառքն ըստ իրաւունքի պատկանում է իր եղբայրներին՝ Հրեշտակներին ու Սրբերին: Իսկ իրենը, իր փառքը թող լինի անդրադարձն այն լոյսի, որ ճառագայթում է իր Մօր դէմքից: Այն՝ ինչ խնդրում է,

¹ 1Կր 12, 31

² SAN GIOVANNI DELLA CROCE, *Cantico Spirituale*, str. 9.

³ Հմմտ. Ղկա 16, 9

⁴ Ղկա 16, 8

սէրն է, նա միայն մի բան գիտէ: սիրել Քեզ, Յիսուս: Նրան արգելուած են համբաւ շահող գործերը, չի կարող քարոզել Աւետարանը, չի կարող հեղել իր արիւնը: Բայց դա կարեւորութիւն չունի: իր եղբայրներն աշխատում են նաեւ իր փոխարէն, իսկ նա, մի փոքրիկ մանուկ, մնում է Թագաւորի ու Թագուհու գահի մօտ, սիրում է իր եղբայրների փոխարէն, որոնք պայքարում են: Իսկ ինչպէ՞ս է փաստելու նա իր սէրը, քանի որ սէրը գործերով է ապացուցւում: Լա՛ւ ուրեմն, փոքրիկ մանուկը սփռելու է ծաղիկներ եւ նրանց անուշահոտ բուրումնաւէտութեամբ պատելու է Թագաւորական գահը, իր արծաթեայ ձայնով երգելու է սիրոյ մեղեդին:

258. Այո՛, Սիրելի, իմ կեանքն այսպէս է սպառուելու: Ուրիշ միջոցներ չունեմ սէրս փաստելու համար, եթէ ոչ միայն՝ ծաղիկներ սփռելը, այսինքն՝ չկորցնելը ոչ մի փոքրիկ գոհողութիւն, ոչ մի ակնարկ, ոչ մի խօսք: շահի վերածել բոլոր փոքրիկ գործերը, դրանք յանուն սիրոյ կատարելով: Ուզում եմ տառապել սիրոյ համար եւ, վերջապէս, խնդալ սիրոյ համար: այսպիսով ծաղիկներ կը սփռեմ գահիդ առաջ: Չեմ ուզում հանդիպել նրանցից մէկին, առանց այն Քո համար թերթատելու: Իսկ յետոյ, ծաղիկներ սփռելիս, կ'երգեմ (հնարաւոր է արգեօք լալ այսքան զուարթ գործի ժամանակ), կ'երգեմ, նոյնիսկ երբ պարտաւոր լինեմ հաւաքել ծաղիկներս ընդմէջ փշերի, եւ մեղեդին այնքան աւելի քաղցրահնչիւն կը լինի՝ որքան աւելի երկար ու խայթող կը լինեն փշերը:

Յիսուս, ի՞նչ օգտակարութիւն կ'ունենան ծաղիկներս ու երգերս: Լաւ գիտեմ, որ այս բուրումնաւէտ անձրեւը, այս անարժէք ու դիւրաբեկ ծաղկաթերթիկները, ամենափոքր սրտի սիրոյ այս երգերը կը հմայեն Քեզ, այս ոչնչութիւնները հաճելի կը լինեն Քեզ, ժպիտ կը նուիրեն յաղթական Եկեղեցուն, որը հաւաքելով յանուն սիրոյ թերթատուած ծաղիկներս եւ անցկացնելով դրանք աստուածային ձեռքերիդ միջով, Յիսուս, այդ երկնային Եկեղեցին, կամենալով խաղալ իր փոքրիկ մանկան հետ, եւ ինքը նոյնպէս աստուածային ոտքերիդ հետ հպումով անսահման արժէք ստացած այդ ծաղիկները կը սփռի տառապող Եկեղեցու վրայ՝ հանգցնելու համար նրան տանջող կրակները, կը սփռի դրանք զինուորեալ Եկեղեցու վրայ՝ օգնելով նրան քայլել դէպի յաղթանակ²:

259. Յիսուս իմ, սիրում եմ Քեզ, սիրում եմ Եկեղեցուն՝ իմ Մօրը, յիշում եմ, որ «մաքուր սիրոյ ամենափոքր ներգործութիւնը նրան աւելի օգտակար է՝ քան միւս բոլոր գործերն ի միասին»³: Բայց մաքուր սէր գոյութիւն ունի՞ արդեօք իմ սրտում: Վիթխարի փափաքներս պատրանք չե՞ն, մի խենթութիւն: Ա՛հ, եթէ այդպէս է, Յիսուս, լուսաւորիր ինձ: Դու գիտես, որ ճշմարտութիւնն եմ փնտռում: Եթէ փափաքներս յանդուգն են, վերացրո՛ւ դրանք, որովհետեւ այդ փափաքներն են իմ ամենամեծ մարտիրոսութիւնը: Եւ սակայն զգում եմ, Յիսուս, սիրոյ երկնասլաց ամենաբարձր գագաթներին հասնել տենչալուց յետոյ, որ եթէ պարտաւոր լինէի երբեւէ չհասնելու դրանց, աւելի մեծ քաղցրութիւն ճաշակած կը լինէի

¹ Հմմտ. 2Թգ 2, 9

² Յաղթական (կամ Երկնային) Եկեղեցի ստելով հասկանում ենք Աստծոյ ժողովրդի այն մասը, որն այլեւս Աստծոյ հետ է եւ անցնելիք միայն մի հանգրուան ունի՝ Նրան լիովին, ամբողջ անձով միանալու համար: Յարութիւնը: Տառապող Եկեղեցին (ըստ Արեւմտեան Եկեղեցու աստուածաբանութեան) նոյն ժողովրդի այն միւս մասն է, որն անցնում է Քաւարանով: Եւ, վերջապէս, Զինուորեալ (կամ Ուղեւոր) Եկեղեցին Աստծոյ ժողովրդի այն մասն է, որը տակաւին ապրում է երկրի վրայ, պայքարելով ընդդէմ մեղքի, անաստուածութեան, եւ նրանից բխող բոլոր անարդարութիւնների (ո՛չ միայն խօսքով, այլ իւրաքանչիւրն իր իսկ անձով, իր իսկ յարաբերութիւններում համապատասխանելով Աստծոյ կամքին):

³ SAN GIOVANNI DELLA CROCE, *Cantico Spirituale*, Annotazione sulla str. 29.

մարտիրոսութեանս մէջ, խենթութեանս մէջ, քան այն՝ որ պիտի վայելէի Հայրենիքի ուրախութիւնների ծոցում, բացի այն պարագայից՝ որ մի հրաշքի միջոցով Երկնքում յիշողութեանս միջից ջնջէիր երկրում ունեցած յոյսերիս յիշատակը: Ուրեմն, թող վայելեմ, այս աքսորիս ընթացքում, սիրոյ քաղցրութիւնները: Թող համտեսեմ մարտիրոսութեանս քաղցրիկ դառնութիւնները:

Յիսո՛ւս, Յիսո՛ւս, եթէ այսքան քաղցր է Քեզ սիրել կամենալը, ի՞նչ է լինելու, ուրեմն, Քեզ ունենալը, Ինքնին Սէրը վայելելը:

260. Բայց մի թերի հոգի, ինչպիսին ես եմ, ինչպէ՞ս կարող է կամենալ՝ տիրանալ Սիրոյ լիութեանը: Յիսուս, իմ առաջին, իմ միակ մտերիմ Ընկեր, Դու՛ որ իմ միակ Սէրն ես, ասա՛ ինձ, այս ի՞նչ խորհուրդ է: Ինչո՞ւ այս վիթխարի ներշնչումները չես վերապահում մեծ հոգիներին, արծիւներին, որոնք սաւառնում են անհասանելի բարձունքներում: Ես ճանաչում եմ ինձ որպէս տկար թուշնակ, մի քանի թեթեւ փետուրներով լոկ ծածկուած: Արծիւ չեմ, արծուային միայն աչքեր ու սիրտ ունեմ, որովհետեւ չնայած բացարձակ փոքրկութեանս, համարձակուում եմ աչքերս յառել դէպի Քեզ, դէպի աստուածային Արեւը¹, դէպի Սիրոյ Արեւը, եւ սիրտս նոյնպէս զգում է արծուային բոլոր ձգտումները: Թուշնակը կ'ուզէր ճախրել դէպի այդ Արեւը, որ հմայք է պատճառում իր զմայլուած հայեացքին, կ'ուզէր հետեւել արծիւներին, իր եղբայրներին, որոնք սաւառնում են ու բարձրանում դէպի Ամենասուրբ Երրորդութեան աստուածային բնակատեղին: Բայց աւա՛ղ: Այն՝ ինչ կարող է անել, իր փոքրիկ թեւերի թափահարումն է միայն, իսկ թուշնակ ... սա իր փոքրիկ կարողութիւնների սահմաններում չէ: Ի՞նչ է լինելու նրա վերջը: Մի՞թէ մահանալու է վշտահար, տեսնելով իրեն այսքան անուժ: Ա՛հ, ո՛չ: Թուշնակը դրա պատճառով չի վշտանալու: Աստուծոյ ձեռքերի մէջ համարձակ ինքնայանձնումով, նա շարունակելու է հայել իր աստուածային Արեւին: Ոչինչ նրան չի վախեցնում, ո՛չ քամին, ո՛չ անձրեւը, եւ եթէ նոյնիսկ մութ ամպերը ծածկեն Սիրոյ Աստղը, թուշնակը չի փոխի իր տեղը, որովհետեւ գիտէ, որ ամպերից այն կողմ Արեւը փայլում է միշտ անդադար, որ Նրա փայլը չի մթազնում ոչ մի վայրկեան:

261. Ճիշտ է, լինում են պահեր, որոնցում նրա սիրտը յարձակման է ենթարկում փոթորիկի կողմից, թուում է նրան՝ թէ գոյութիւն ունեն միայն ամպերը, որ շրջապատում են իրեն: Բայց ճիշտ այդ պահերն են խեղճ ու տկար թուշնակի կատարեալ ուրախութեան ըոպէները: Նրա համար ինչպիսի՛ երջանկութիւն է շարունակելն այնտեղ մնալը եւ իր հայեացքն յառելն այն անտեսանելի լոյսին, որ թաքնում է իր հաւատքի տեսադաշտից: Յիսուս, այժմ հասկանում եմ թուշնակի հանդէպ տածած սէրը, որովհետեւ չի հեռանում Քեզնից: Բայց ես գիտեմ, եւ Դու նոյնպէս իմանում ես դա, որ յաճախ այս փոքրագոյն ու անկատար արարածը, իր տեղում մնալով հանդերձ (այսինքն՝ Արեւի ճառագայթների ներքոյ), մի քիչ ցրւում է իր միակ զբաղմունքից, հատիկներ է կտցում այստեղ ու այնտեղ, վազում մի փոքրիկ որդի ետեւից: Իսկ յետոյ, ջրափոսի հանդիպելով, թրջում է հագիւլ աճած փետուրները, տեսնում է իր աչքերը շոյող մի ծաղիկ եւ իր ամբողջ փոքրիկ հոգին զբաղւում է այդ ծաղիկով: Վերջապէս, չկարողանալով սաւառնել ինչպէս արծիւները, խեղճ թուշնակը դարձեալ զբաղւում է երկրային փուջ փոքրկութիւններով:

¹ Սուրբ Հայրերի գրութիւններում Յիսուս յաճախ է այլաբանօրէն ներկայացւում արեւի կերպարով: Պատճառն այն է, որ ինչպէս նիւթական խաւարն է մի քայլ անգամ կատարելու լիակատար անկարողութեանը մատնում մարդուն, այնպէս էլ հոգեւոր խաւարն է կուրացնում նրան ու զրկում միակ ճշմարիտ Աստուծոյ՝ Ամենասուրբ Երրորդութեան գիտութիւնից: Եւ ինչպէս արեւն է լուսաւորում նիւթական խաւարը (արեւը՝ որն Աստուծոյ ստեղծած արարածներից մէկն է), այնպէս էլ Յիսուս, յայտնելով մեզ ճշմարտութիւնը, լուսաւորեց հեթանոսական խաւարում խարխափող մարդկութիւնը:

Եւ սակայն, այս բոլոր չարաճճիութիւններից յետոյ, փոխանակ գնալու մի անկիւնում թաքնուելու՝ իր թշուառութիւնը ողբալու եւ զղջումից մեռնելու, թուչնակը շրջում է դէպի սիրասուն Արեւը, Նրա բարերար ճառագայթներին է ներկայացնում իր թրջուած փետուրները, ճուղողում է ծիծեռնակի նման¹, եւ քաղցրաձայն վստահութեամբ պատմում է իր անհաւատարմութեան բոլոր մանրամասները, մտածելով իր յանդուգն ինքնայանձնումով ձեռքբերել աւելի մեծ տիրապետութիւն, աւելի մեծ լիութեամբ իր վրայ հրաւիրել սէրը Նրա՝ ով չեկաւ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին²:

262. Եթէ պաշտելի Աստղը խուլ է մնում Իր փոքրիկ արարածի ողբաձայն դայլայլներին ի լուր, եթէ մնում է քողարկուած, շա՛տ լաւ, այնժամ փոքրիկ արարածը մնում է թրջուած, ընդունում է ցրտից ընդարմանալու դատապարտուածի իր հանգամանքը, եւ նորից ուրախանում է այս տառապանքի համար, որին սակայն իսկապէս արժանացել է:

Յիսուս, որքան երջանիկ է թուչնակը իր տկար ու փոքրիկ լինելու համար: Ա՛հ, ի՞նչ էր լինելու նրա վիճակը, եթէ մեծ լինէր: Երբեք չէր ունենայ վեհութեանդ ներկայանալու, ներկայութեանդ մրափելու համարձակութիւնը: Այո՛, դա էլ թուչնակի տկարութիւններից մէկն է. երբ կամենում է հայեացքը սեւեռել աստուածային Արեւին³, ու միջին ամպերը նրան չեն տալիս գէթ մի ճառագայթ տեսնելու հնարաւորութիւնը, չնայած իր բարի կամքին, նրա փոքրիկ աչուկները փակուած են, գլխիկը թաքնուած է թեւի տակ եւ փոքրիկ խեղճ արարածը քուն է մտնում, կարծելով՝ թէ շարունակում է սեւեռուն հայեացքով դիտել իր սիրասուն Աստղը: Իսկ երբ արթնանում է, չի տրտմում, նրա սրտիկը մնում է խաղաղ, վերսկսում է իր սիրոյ գործը, կանչում է Հրեշտակներին ու Սրբերին, որոնք արծիւների նման կարողանում են բարձրանալ դէպի սպառիչ կրակարանը, առարկան իր տենչանքի, եւ արծիւները, խղճալով, պաշտպանում են իրենց քրոջը եւ փախուստի են մատնում բոլոր գիշատիչներին, որոնք ցանկանում են յօշոտել նրան:

263. Գիշատիչները, որ պատկերն են աստանաների, փոքրիկ թուչնակը չի վախենում նրանցից, սահմանուած չէ նրանց որսը դառնալու: Նա դառնալու է գոհը Արծուի, որին մտասեւեռ դիտում է Սիրոյ Արեւի կենտրոնում: Ո՛վ աստուածային Խօսք⁴, Դու ես այդ պաշտելի Արծիւը, որ ես սիրում եմ: Դու ձգում ես ինձ, Դու ես, որ նետուելով այս աքսորի երկիրը, կամեցար տառապել ու մեռնել, ձգելու համար հոգիներին դէպի Ամենասուրբ Երրորդութեան յաւիտենական բովը: Դու ես, որ համբառնալով հանդերձ դէպի անհասանելի Լոյսը, որ այսուհետեւ լինելու է բնակարանդ, Դու ես՝ որ դարձեալ մնում ես արցունքների այս հովտում, սպիտակ Նշխարի երեւոյթների ներքոյ թաքնուած: Յաւերժական Արծիւ, Դու կամենում ես սնել ինձ աստուածային էութեամբդ, ինձ՝ խեղճ արարածիս, որ ոչնչութեան կը վերածուէի կրկին, եթէ աստուածային հայեացքդ չչնորհէր ինձ կեանք վայրկեան առ վայրկեան: Ա՛հ, Յիսուս, թող որ ասեմ, երախտագիտութեանս յորձանքից տարուած, թող ասեմ՝ որ սէրդ հասնում է խենթութեան ... : Ինչպէ՞ս ես ուզում, որ ի տես այս խենթութեան, սիրտս չխոյանայ դէպի Քեզ: Ինչպէ՞ս կարող է սահմանների մէջ փակուել վստահութիւնս: Քո համար, գիտեմ դա, Սրբերը նոյնպէս կատարել են խենթութիւններ, կատարել են մեծամեծ գործեր, որովհետեւ արծիւներ էին:

¹ Ես 38, 14

² Մտթ 9, 13

³ Տե՛ս՝ սոյն գլխի թիւ 17 ծանօթագրութիւնը:

⁴ Տե՛ս՝ Զեռագիր Ա, 2րդ գլխի թիւ 20 ծանօթագրութիւնը:

264. Յիսուս, չափազանց փոքր եմ մեծագործութիւններ կատարելու համար, եւ իմ խենթութիւնը յոյս է, որ Սէրդ կ'ընդունի ինձ որպէս զոհ: Իմ խենթութիւնը կայանում է արծիւներին՝ իմ եղբայրներին աղաչելու մէջ, որպէսզի ստանան իմ համար շնորհը՝ սլանալու դէպի Սիրոյ Արեւը, նոյն Ինքն աստուածային Արծուի թեւերով¹:

Հետեւաբար, որքան ժամանակ Դու կ'ուզես, ով Սիրելի իմ, Քո փոքրիկ թռչնակը կը մնայ առանց ուժի ու թեւերի. աչքերը միշտ յառած կը պահի դէպի Քեզ: Նա կամենում է հմայուել Քո աստուածային հայեացքով, կամենում է զոհ դառնալ Սիրոյդ: Մի օր, համարձակուով եմ յուսալ, ով պաշտելի Արծիւ, կը գաս փնտռելու Քո փոքրիկ թռչնակին, եւ կրկին բարձրանալով նրա հետ դէպի հնոցը Սիրոյ, կ'ընկղմես նրան Սիրոյ բոցավառ անդունդների մէջ, այն Սիրոյ՝ որին նա նուիրուել է որպէս զոհ:

265. Ա՛հ, Յիսուս, ինչպէ՞ս ասեմ բոլոր փոքրիկ հոգիներին՝ թէ որքա՛ն անճառելի է բարեհաճութիւնդ: Զգում եմ, որ եթէ – անհնարին բան – գտնէիր մի հոգի աւելի տկար, աւելի խեղճ՝ քան ես, կը հաճէիր լիացնել նրան է՛լ աւելի մեծ շնորհներով, եթէ բացարձակ վստահութեամբ յանձնուէր անսահման ողորմութեանդ: Բայց ինչո՞ւ փափաքել հաղորդել սիրոյդ գաղտնիքները, Յիսուս. մի՞թէ Դու չես միայն, որ սովորեցրիր ինձ դրանք, եւ մի՞թէ չես կարող յայտնել դրանք նաեւ ուրիշներին: Այո՛, գիտեմ որ կարող ես, եւ պաղատում եմ Քեզ այդպէս անել. աղաչում եմ Քեզ խոնարհեցնել աստուածային հայեացքդ փոքրիկ հոգիների մի մեծաբանակ բազմութեան վրայ: Աղաչում եմ Քեզ ընտրել փոքրիկ զոհերի մի զօրախումբ, արժանի Քո Սիրոյն:

Շատ փոքրիկ Քոյր Թերեզա
Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի
անարժանաբար՝ կարմեղական միանձնուհի



¹ Հմմտ. 20ր 32, 11